ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** կանոնադրության 16.4-րդ կետի և 16.34-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի անդամ Ռուբեն Հակոբյանը 18.09.2014թ. գրավոր դիմել է Պալատին՝ խնդրելով իր լիազորությունները համարել վաղաժամկետ դադարեցված՝ կապված այն հանգամանքի հետ, որ վերջինս Վանաձոր քաղաքում մշտապես բնակվելու պատճառով որոշակի դժվարություն ունի մասնակցելու առնվազն շաբաթը մեկ անգամ գումարվող Պալատի խորհրդի նիստերին,

նկատի ունենալով այն, որ Պալատի կանոնադրության 16.34 կետի 1-ին ենթակետի ուժով Ռուբեն Հակոբյանի՝ որպես Պալատի խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարեցված 2014թ. սեպտեմբերի 19-ից,

ի գիտություն ընդունելով Պալատի հաշվիչ հանձնաժողովի 09.03.2013թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած (241 ձայն) փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Սիրունյանի (արտոնագիր թիվ 945) 22.09.2014թ. գրավոր համաձայնությունը՝ խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Ռուբեն Մարատի Հակոբյանի լիազորությունները համարվում են դադարեցված 2014թ. սեպտեմբերի 19-ից:

2. Արձանագրել, որ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 09.03.2013թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Սիրունյանը (241 ձայն) 2014թ. սեպտեմբերի 22-ից համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Ռուբեն Հակոբյանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

22 սեպտեմբերի 2014թ.
թիվ 328-Ա
ք. Երևան